



ՈՅԺԴ · 1865 — ՔՍԱՆԵՐՈՐԴ ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ · — ՄԱՅԻՍ

ԽՈՍՆԱԿՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՅԱՆԱՊԱՏՍ ՀԱՅՈՅ

## Դ

Վ'երեկի թէ բաւական ժամանակ մը՝  
նաց Ռսկերերան յԱրարիան, որ կոկի-  
սոնէն աւելի ամայի և անշէն էր. իր  
ձախ բարեկամներն կամատ հոս ուշա-  
ցուցին զինքը՝ որ աւելի նեղուի. մինչ-  
դեռ ստոյդ բարեկամներն կու մորմու-  
քէին վրան : իսկ ինքն իրեն սովորու-  
թեամբը զրելէ չէր դադրեր . և յոմանց  
կարծուի որ հոս գրած ըլլայ այն եր-  
կու նախայիշեալ զրերն 'ի միսիթարու-  
թիւն վշտացելոց և գայթակղելոց : Նոյն  
իսկ տեղն այլ իրեն ուրիշ սփոփանաց ա-  
ռիթ կ'ընծայէր . - բարեսէր հիւրընկալ-  
ներ. որոց առաջին սեպելու է այն ամա-  
յութեանց մէջ կորած քաղքին եպիսկո-  
պոսն՝ Ռուրիոս, (եթէ ուրիշ կերպ կար-  
դալու չէ այս անունս) . անշուշտ առա-  
ջուց իսկ ծանօթացած էր ասոր հետ .  
և թղթի մը մէջ առ Ռուրինոս երէց  
Փիւնիկիոյ՝ որ իրմէ սրբոց նշխարք կու

խնդրէր, խոստանայ զրկել, բերել տա-  
լով այս Արարիսոնի Ռուրիոս եպիսկո-  
պոսէն, որ ունէր շատ մասունք սրբոց :  
Հաւանօրէն այս բանս հանդիպեցաւ  
յԱրարիսոնէ նորէն 'ի կոկիւսոն դար-  
ձած ատենն . ուր մէկ սաստիկ և վեր-  
ջին ձմեռ մ'այլ անցուց , որ երթալով  
նուազեցընէր իր ուժը և կեանքը :

Հասաւ վերջին զարունն այլ . նորէն  
կենդանանալ կարծեց և զուարթացաւ  
Ռսկերերան . բայց, « եթէ ամեն մարդ ,  
» կ'ըսէ , կու զուարճանայ գալստեամբ  
» գարնան , որ վերկիր ծաղկօք և մար-  
» գօք կու զարդարէ , ես անոր համար  
» կ'ուրախանամ՝ որ ինծի ոյժ կու տայ  
» նորէն իմ մուերմացս հետ խօսակցե-  
» լու թղթով . . . Ո՛չ այնչափ նաևավարք  
» և թիւվարք խնդալով այս եղանա-  
» կիս գալուն՝ կ'ելնեն ծովեր պատուե-  
» լու , որչափ ես խնտումով կ'առնում

» 'ի ձեռքս եղեցս, թուղթս և թանաւ» .քը, ձեզի գրելու համար » : Երանի երբայս գրութեան նիւթերն ունենար .վասն զի « ձմեռուան ատեն երբ չորս » զին սառած էր, կ'ըսէ, և չտեսնուած » թանձրութիւն ձեան ամեն ճամբայ » խցեր գոցեր էր, և ոչ երթալ ոչ դալ » կ'ըլլար . իրբե բանտի մէջ յայս ար » նակս փակուած, թուղթ չունենալով՝ » իրբե շղթայակապ լեզուաւ մշտնջե » նաւոր դատապարտուած էին: իսկ այն վերջին ձմեռուան համար՝ գոր 'ի կոկիւսն կրեց, 'ի սկիզբն 407 տարւոյն, այսպէս կու գրէ առ հաւատարիմն Ուլումպիադա . « Ձմեռնս արդարե Հայա» ստանի ձմեռն էր . այսչափ ըսելս բաւական է . բայց ինծի շատ չդպաւ . » վասն զի գիտնալով ըլլալիքն՝ առաջը » կ'առնում. միշտ կրակ վառելով, շատ » զգեստ հագնելով, աղէկ գոցուելով, » և խցիկէս գուրս չելնելով. որ թէպէտ » շատ ձանձրալի բան է ինծի, բայց ա» պագայ օգտին համար կու համբեր» րեմ: Քանի որ տան մէջ եմ՝ շատ » չեմ նեղիր ցըրտէն . բայց եթէ քիչ » մը գուրս ելնենք կամ բաց օղի կե» նանք՝ շատ կու նեղինք: Ուստի քենէ » այլ կ'աղաչեմ և կու ինդրեմ իրբե » մեծ շնորհք մը՝ որ քու առողջու» թեանդ այլ հոգ տանիս . . . և ճար» տար բժշկաց խորհրդով վարուիս: . . . » ինչպէս ես այլ անցեալները քիչ մը » օղին ցրտութենէն ստամքի նեղու» թիւն քաշելով, բաց ուրիշ դեղերէ» մեր ազնիւ և պատուական Սիւնկլի» տիա տիկնոջ խաւրած դեղն այլ առ» նըլով՝ գրեթէ իրեք օրուան մէջ նո» բէն առողջացայ . . ուստի և կու խընդ» րեմ որ այն դեղէն նորէն ինծի ճա» րել տաս, որ թէ ստամքաց զրգու» թեան դէմ կ'օգտէ, թէ կրծոց բոր» բոքումը հանդարտեցընելու, և թէ » հարբուխը կ'իջեցընէ . և չափաւորա» պէս տաքցընելով՝ թէ ոյժ կու տայ» թէ ախորժակ կու բանայ . ինչպէս » քանի մ'օր առաջ ես փորձեցի այս » ամենն այլ: Ճար ըրէ որ թէովիխոս » կոմնն նորէն խաւրէ ինծի այս դեղէն:

» — Բայց չըլլայ թէ խոռվիս հոս տեղ» քաշած ձմեռուանս համար . վասն զի» անցեալ տարուցնէ շատ աւելի աղէկ» եմ» : Այս իրաւ կամ յուսագիր աւետիսը տալէն ետև, երկայն խրատներով կու յորդորէ զՈլիմպիա՝ որ ինքզինքը չթողուտ տրտմութեան հոգոց մէջ, հապա գեղով, համբերութեամբ և սուրբ մտածութեամբք քաջալերուի . և ասոնց դիւրութեան համար կու խաւրէ իրեն՝ նախ յիշած մխիթարական գրուածքը, Ոչ ոք վնասի յայլմէ եքէ ոչ յանձնէն . զոր և պատուիրէ շատ անգամ կարդալ և ինչուան ՚ի բերան այլ սովորիլ: Եւ դարձեալ իր վրայ գալով՝ աւելի մըխիթարելու համար այն սրտահոգ աղաւնին՝ ցանկալի յոյսեր կու տայ, որով թերեւս նախախնամութիւնն զինքն խակ խարեր և անուշցընէր պանդխտութիւնը . « Իսկ եթէ ինձմէ զատուած ըլ» լալուդ համար է տիսրութիւնդ, ասոր » այլ ուրախալի վերծը կրնաս յուսաւ. » և զայս ոչ եթէ զքեզ սփոփելու համար կ'ըսեմ, այլ ինծի յայտնի կ'ե» ըսկի այս բանս . վասն զի եթէ այս պէս ըլլալու չէր, եթէ չեմ սխալիր . » ինչուան հիմայ քաշած նեղութիւն» ներէս՝ շատոնց մեռած կ'ըլլայի . թողլ» լով ՚ի Կ.Պոլիս կրածներս, ինչեր որ » քաղքէն ելնելէս ետև այն երկայն և » ձանձրալի ճամբորդութեան մէջ կրե» ցի, որոց շատն բաւական էին զիս » մեռցընելու, ինչ որ հոս գալէս վերջը » քաշեցի, ինչ որ կոկիսոնէն ելնելէս » ետև և Արաբիսոնն եղած ատենս, յայտ» նի են քեզի: Արդ այս ամեն վտան» գէն աղատեցայ . և հիմայ թէ առողջ» եմ և թէ շատ հանգիստ . անանկ որ » Հայերն անգամ կ'ափշին թէ ինչպէս » ասանկ տկար և զաղիփաղփուն մար» մնով կրնամ այսպիսի ցրտու դիմա» նալ և ողի առնուլ, երբ իրենք իսկ» որ ձմեռուան վարժած են, այս տա» րուանս ձմեռը կարգէ գուրս է կ'ը» սեն . իսկ ես ինչուան այսօր անվնաս » և անարատ մնացի . աւազակաց ձեռ» քէն աղատեցայ՝ որ շատ անգամ վը» բանիս յարձակեցան, շատ կարեսոր

» բաներէ զուրկ ըլլալով , ինչուան բաղ-  
» նիքէ այլ . որոնց առջի բերան շատ  
» պէտք կու զգայի . իսկ հիմայ անանկ  
» եղայ՝ որ ոչ պէտք կ'իմանամ , և ոչ  
» այլ պակաս առողջ եմ՝ քան եթէ ա-  
» նոնք ունեցած ըլլայի : Ոչ օդոց սաստ-  
» կութիւնն , ոչ տեղեաց ամայութիւնն ,  
» ոչ գնելի բաներու քիչութիւն , ոչ կա-  
» րեոր դարմանոց պակասութիւնն , ոչ  
» բժշկաց տգիսութիւնն , ոչ բաղա-  
» նեաց չգտուիին , ոչ իսկ տնակիս մէջ  
» իրեն՝ ի բանտի արգելեալ մնալս , չկա-  
» րենալով քիչ մը քալել՝ որ ինձի միշտ  
» հարկաւոր էր . ոչ անդադար կրակի  
» և ծխոյ մէջ նստիլս , ոչ աւազակաց  
» վախն , ոչ պահապանաց զգուշանախ  
» վրաս , և ոչ մէկ այսպիսի նեղութիւն՝  
» կրցան զիս ճնշել և ընկճել . այլ և ա-  
» ւելի առողջ և հանգիստ եմ քան թէ  
» առաջ , թէպէտ և խնամք և հոգ տա-  
» նելով : Արդ այս բաներս գիտնալով՝  
« դու այլ մէկդի թող հոգերդ և տըրտ-  
» մութիւնդ » :

Աստուծոյ ողորմութեան , արդարու-  
թեան իրաւանց , հաւատարմաց սիրոյն  
և ջանից , և Հռովմայ քահանայապետին  
և կայսեր (Ծնորիոսի) յուսադրութեան  
վրայ վստահացեալ՝ կրնար Ոսկեբերան  
այսպէս գրել , մանաւանդ առ Ոլիմպիա-  
դա : Նոյն իսկ երկինք և վերինք Ոսկե-  
բերանի վշտակից և կողմնակից յայտ-  
նուեցան շատ և շատ կերպով . ուղղոց  
պաշտպանութիւն և երկայնմտութիւն  
և վկայական պսակներ տալով , իսկ թիւ-  
րելոց շատին՝ շուտ և չարաշար վախ-  
ճան . որոց ժամանակակից և անկողմնա-  
սէր պատմիչք այլ վկայեն : Արդարոյն  
դէմ միաբանեալ եպիսկոպոսաց շա-  
տերն այսպիսի վերջ ունեցան . և նախ  
քան զայլս՝ կիւրինոս , քաղկեդոնի ե-  
պիսկոպոսն , որ իր թեմին մէջ ժողվեր  
էր իր օրինաւոր առաջնորդին հակա-  
ռակորդները . նոյն ժողովին մէջ միա-  
մտութեամբ գտուելով և Ս . Մարութա-  
մարտիրոսասէր հայրապետն՝ դիակուա-  
ծով այս կիւրինոսի ոտքը կոփեց . անկէ  
ցաւ և վէրք պատճառեցաւ , որ մար-  
մնոյն վրայ այլ ճարակելով՝ քիչ ատենէ

մեռուց զնա : Բայց ամենէն գլխաւոր  
շարեաց գրգոիչն՝ Եւղոքսիա , գրեթէ  
ամենէն այլ առաջ՝ իր հասակին և փա-  
ռաց ամենէն փայլման ատեն՝ մեռաւ  
(տղաբերքի ցաւով) , հազիւ երեք և կէս  
ամիս Ոսկեբերանի արտասահմանու-  
թենէն ետե , (6 Հոկտ . 404) , մինչ գեռ  
սա նոր հասած էր՝ ի կոկիւսոն : Թը-  
շուառ դշոյ , տղեղացեալ մայր սրբա-  
սէր Գեղանւոյն (Բուկքերիայ) . թէ կա-  
մաւ չնուաստացընէիր քու սիրտդ՝ մի-  
թէ չէր կրնար բարձրանալ քու օրիոր-  
դիզ նման : Եթէ Ոսկեբերան զքեզ՝ լրը-  
բութեանդ և ագահութեանդ համար՝  
Յեղաբելի և Հերովդիազայ նմանցուց ,  
միթէ երբեմն այլ մեծապէս չգովեց ,  
երբոր գրեթէ իրեն հետ թափօրակից՝  
վոխադրէիր զնշխարս սրբոցն . դու թըշ-  
նամի եղար այն մեծ անձին , նա ոչ եր-  
բէք քեզի . որ և հիմայ լսելով տարա-  
ժամ մահդ՝ ոչ միայն ոչ խնդաց , այլ և  
ողբաց անշուշտ , որպէս Դաւիթ զԱքե-  
սաղոմ : Աւազ , ափսոս քեզ . շատ՝ և քան  
զչափդ՝ ի վեր բարձրացուցիր շարժե-  
ցիր թագափայլ զլուխդ : Հասաւ , ո՞հ .  
և ինչ շուտով , հասաւ քու սև օրդ այլ ,  
ծածկելու ամեն փառդդ , ամեն վայ-  
ելքդ , ամեն յոյսդ . զքեզ ինքն բոլո-  
րովին ծածկելու յաշխարհէս . . . թող  
զիր հիմայ այդ մարմարեայ զլուխդ  
ցուրտ բարձին վրայ , և իջիր , մտիր ,  
թագիր , թազուէ , դադրէ մութ գերեզ-  
մանին մէջ : . . . Խնայէ , ով ահեղ ար-  
դարութիւն . — բայց սա թող շիտար ա-  
նոր հանգչելու գերեզմանին մէջ այլ :  
Ոչ Ոսկեբերանն է հոս , այլ Բարձրեալն  
Աստուած՝ բարկութեամբ կու նայի իր  
սրբութեանց դիմաց զրուած զշխոյին մե-  
ռեալ մարմնոյն վրայ : . . . Երեսուն և չորս  
տարի Եւղոքսիայ գերեզմանն շարժե-  
լով կու դողայ կու դլրդի , ինչուան որ  
յետ այնքան երկար տարիներու՝ իր հա-  
լածեալ Արքոյն փառաւորեալ մարմինն  
դայ՝ իր գիմաց կանգնի ու դադրեցընէ  
զանհանդարան զայն՝ ի կեանս և՝ ի մա-  
հուն : Այն ատեն պիտի դադրի եկե-  
զեցւոյն հերձուածն այլ , որոյ մէկ մասն  
Յովհաննիսիսեան կոչուէր՝ Ոսկեբերանի

Հաւատարիմ մնալուն համար : Շատ կու ցաւէր Սուրբն այլ այս երկպառակութեան և անպարտ մարդկան հալածանաց և չարչարանաց վրայ . զոր կու վախէր թէ աւելի զայրացընէ՝ եթէ կամք հրաժարի իր աթոռէն , իբր հաստատելով թէոփիլեանց անկանոն ժողովը : Ասոր համար զեռ կ. Փօլսէն չելած՝ բողոքոյ գիր գրեր էր առ Պապն իննովկենտիոս , որպէս և վերջն այլ , բայց օգուտ մը չեղաւ :

Իսկ հիմայ յետ եռամեայ տառապանաց պատորանացն՝ սրտառուչ գիր մ' այլ զրելով կ'ըսէ առ նոյն գլուխն եկեղեցւոյ . « Թէպէտ և մարմնով որո՞ն շեալ տեղ մը միայն կու բնակինք , » բայց սիրոյ թեն բոլոր աշխարհս կու » պատէ . թէ և անբաւ ճամբով հեռու » եմք իրարմէ , բայց ես քու Սրբու » թենէդ զատուած չեմ , այլ միշտ ներ » կայ գտուիմ . սիրոյ աչք տեսնելով » քու արիութիւնդ , անկեղծ գութդ , » անփոփխս հաստատութիւնդ , և այն » մեծ , անպակաս և շարունակ միխթաւ » ըութիւնդ՝ որով կու սփոփես զիս ... » Ասոր համար մեծապէս չնորհակալ » եմ , և փափագէի ստէպ զրել ձեզի , » որ ինձի այլ մեծ միխթարութիւնն էր . » սակայն տեղլոյս ամայութիւնն չիթու » զուր ինձի զայս . ոչ միայն հեռաւոր՝ » այլ և մօտաւոր կողմերէ անգամ հոս » գալը զժար է , թէ տեղլոյս՝ սահման՝ » ներէ զուրս առանձնութեանն համար , և թէ ճամբաներն աւազակներէ բոնուած ըլլալուն . անոր համար » կարեկցութեան արժանի սեպէ զիս և » մի կարծեր անհոգութիւն » : Ապա կու խոստովանի որ Պապուն հայրենի խընամքն բաւական էր ամեն բան կարգի դնելու , եթէ հակառակորդը նորանոր չարիք չնարէին , որոց ըրածները պատմելու չէ թէ նամակ՝ այլ և ոչ զերք մը բաւէր : Եւ դարձեալ կրկին և կրկին կ'աղաշէ՝ որ զանց չընէ հսկողութիւնը , վասն զի եղած չարկին բոլոր եկեղեցւոյ վեաս կու սպառնան : « իսկ ես՝ առ հա երկը տարի կ'ըլլայ պատորանացս , » որ սովու , սրածութեան , պատերազ-

» մի , անդադար պաշարմանց , խելքէ » դուրս միայնութեան , ամենօրեայ մա » հուան և իսաւրացի սրերու մէջ ըլ » լալով , շատ ու շատ կու միխթարուիմ » ձեր հաստատուն և յարատես գիրովը , » և անկեղծ սիրովդ կու զուարճանամ : » Ատոնք են իմ պարիսպքս , իմ պաշտ » պանութիւնս . այդ է իմ անալէկոծ » նաւահանգիստս , և անբաւ բարեաց » գանձս , և մեծ ուրախութեանց և զր » ւարճութեանց առիթս : Այսպէս այս » անապատագոյն տեղւոյս մէջ այլ իմ » վշտացս մեծ միխթարութիւն կու » գտննեմ » : — Այսպիսի թղթոյ և գրողի՝ իննովկենտիոս չէր կրնար ճարտասանական պատասխան մը տալ , այլ կրնար և կրցաւ իրեն վայելուչ հայրաբար լեզուաւ խօսիլ . « Թէպէտ և պէտք » է որ անմեղն՝ ամենայն բարիք և որ » զորմութիւն՝ յԱստուծոյ յուսայ , սա » կայն մենք այլ այս թուղթս կու » գրեմք ( կիւրակոս սարկաւագի ձեռք ) , յորդորելով՝ ի համբերել . որ » չըլլայ թէ անիրաւութիւնն աւելի զօր » բանայ ընկճելով , քան թէ բարի » խիղճն՝ յուսալով : Գիտեմ որ ինձմէ » սովորելու կարօտ չես դու՝ այդքան » ժողովրդոց վարդապետ և հայր , » թէ առաքինիք անգամ միշտ կու փոր » ձուին , որ յայտնի ըլլայ իրենց հաս » տատութիւնն և չտկարանան վը » տանգաց մէջ , և երենայ խղճի մտաց » զօրութիւնն ընդդէմ ամենայն անի » բաւ չարեաց . որոց կատարելապէս » չյաղթողն՝ կրնայ երկրայելի ըլլալ : » Ամեն բանի պէտք է համբերէ՝ ով որ » նախ Աստուծոյ և ապա իր խղճմուա » նաց վրայ վստահ է : Արդարն կրնայ » ամենայն վշտաց տակ ընկնիլ , բայց » յաղթուիլ՝ ոչ . վասն զի միտքն ամբա » ցած է վարդապետութեամբ Ա. գրոց , » զոր ժողովրդեան կու քարոզեմք . որք » և վկայեն՝ թէ գրեթէ ամենայն սուրբք » զանազան կերպով և միշտ չարչա » բուեցան , և իբրև կրակով փորձուեր » լով՝ այնպէս իրենց համբերութեան » պսակն ընդունեցան : Արդ հոգւոյդ » զիտակցութիւնն միխթարէ քու սիր-

» տրդ, եղբայր իմ ամենասիրելի, որ  
» միայն միսիթարութիւն է առաքինու-  
» թեան՝ տառապանաց մէջ։ Քրիստոսի  
» Տեառն մերոյ աշաց առջև՝ զտեալ  
» խղճմտանքն՝ պիտի ձգէ խարիսխը 'ի  
» նաւահանգիատն խաղաղութեան » :

Ի՞նչ պարզ ու վսեմ, ի՞նչ սրտառուչ  
և երկնախառն խօսուածք երկուց քա-  
հանայապետաց. ով չխտեսներ աստուա-  
ծային ձեռքն իր եկեղեցւոյն զիսոյն ձե-  
ռաց մէջ, և իր երկնային զծիռն՝ զու-  
շակեալ անոր զըշովը, քան զոր բար-  
ձրագոյն անձ մը չէր կրնար ըլլալ եր-  
կրիս վրայ՝ Յովհաննու առջև։ Միշտ  
մաքուր գիտակցութիւնն Յովհաննու՝  
այլ աւելի զտեալ այսքան տառապա-  
նգք, ուրեմն ուրիշ բանի չէր մնար՝ բայց  
եթէ ձգելու իր մեծ խարիսխը 'ի խորս  
յաւիտենական խաղաղութեան։ . . .

Արդ ինչու չես փութարյետին փոթո-  
րիկ կրից նախանձու և ատելրութեան,  
քշելու այս ալէկոծ և միշտ ծովայաղթ  
նաւն՝ իր յետին ծոցը. մինչև ցերք կու  
տարութերես զնա 'ի կոկիւառնէ յԱրա-  
բիսոն, յամայութենէ յամայութիւն . . .  
փչէ, մէկ մ'այլ փչէ քու յետին դառ-  
նութեան շրւնչգ, և անիրաւութիւնն  
իր գործը կատարէ երկրիս վրայ, արդա-  
րութիւնն այլ յերկնից հանդիսանայ։

Եկաւ հասաւ, լեռներ և անապատ-  
ներ անցնելով՝ այն դժոխաշունչ փոթո-  
րիկն. ներքինեաց և խարեբայից խա-  
ղալիկ եղած՝ թոյլ և դառնացեալ Ար-  
կադեայ հրամանն, խնալով իր եղրօր  
(Ոնորիոսի) և Պապին խրատուց։ Որով-  
հետեւ այնչափ եպիսկոպոսք և իշխանք  
յետ ամենայն ջանից չէին կրնար մեր  
խօսնակին ուկի բերանը ըլեցընել, չէին  
կրնար արգելուլ մեծաւ մասամբ զթու-  
նաստան, զչայաստան, զԱսորիս, զփիւ-  
նիկէ, զՊարսս և զԳոթս, և զիտալիա՝  
իրեն դառնալէն գլխով և խնամով, և  
զբոլոր աշխարհ՝ զնա պատուելէն, վրճ-  
աեցին անգութքն որ անոր անապա-  
տագոյն կարծած տեղէն՝ այլ և շատ ա-  
ւելի հեռու և խոր ամայի անապատ  
տեղ մը տարուի. որովհետեւ կոկացիք  
շատ կակուզ զտուեցան և չայք մար-

դասիրագոյն քան զթոյնս, թող քշուի  
Յովհաննէս մինչև յանկիւնս Պոնտոսի,  
Լազիստանու բարբարոս բնակչաց մէջ,  
յանծանօթ տեղին Պիտիւնտ, (կամ  
Պիդիհոն ըստ նախնեաց) որ է հիմկու  
Բիցունտա՝ ի ստորոտս կովկաս լերանց  
Ավիսազաց ծովեղերքը, ուր հազիւ նտւ-  
մօտենար, և ցամաքէն այլ հազիւ թէ  
մարդ կ'երթար. այնքան անսովոր և  
վախնալու տեղ էր : . . . Ո՛հ, ինչուան ուր  
այլ կու հասնի եղեր նախանձն կոյր և  
կամակոր. և ի՞նչպէս դժոխանման խիստ  
է եղեր այդ կիրք՝ նաև այսպիսի ան-  
շար և արժանաւոր անձի դէմ։ . . . Ի՞նչ  
ողորմելի արարած և ի՞նչ սաստիկ գա-  
զան է մարդս մարդու հետ : . . . Աս-  
տուած իմ, ազատէ զմեզ այսպիսի կըր-  
քերէ : . . .

Արգելական հիւանդին վերջին ձմեռն  
այլ անցեր էր. ցանկալի և ուշացած գտ-  
րունն այլ եկեր էր. ծաղկունք հետ ի-  
րարու բացուէին գոցուէին. և այլ պի-  
տի չբացուէին Ոսկեբերանի աշաց առ-  
ջև. ոհ, այլ պիտի չկոխէր նա հեզա-  
քայլ գարշապարօքն Զահանայ հով-  
տաց նկարազարդ մարմանդները. այլ  
պիտի չդարձնէր դէմքն առաւոտանց  
Եփրատայ վազած կողմը, կենսաբեր՝  
զուարթարար արեգակն ողջունելու, և  
ոչ անմիուր տրտմութեամբ մը՝ անոր  
յետին ճառագայթից մնաք բարով ը-  
սելու դառնար՝ դէպ 'ի զարհուրելի ի-  
սաւրացւոց քարամուր լեռները։ Այլ  
պիտի չտարածուէր 40 տարի շարժ-  
վարժենի ձեռքն մագաղաթաց վրայ,  
երկնից ազդողագոյն պատուէրքները՝  
երկրիս ազնուագոյն լեզուաւ գծագրե-  
լու. — այլ պիտի չերթային թոչելով իր  
իմաստուն և միսիթարալից նամակներն  
ընդ ծով և ընդ ցամաք, այնքան կարօտ  
և տրտմեալ սրտեր սփոփելու, և եկե-  
ղեցիներ հաստատելու. — Ոսկեբերանն  
այլ պիտի դադրէր. աշխարհ խանար,  
եկեղեցի ամայի մնար, շաելով գքաղցը  
ձայն՝ իւր աննման խօսնակին : . . .

Իր աթոռը թողէն և աքսորանաց  
սկզբէն 'ի վեր՝ իրեք տարին լրացեր էր.  
յունիս ամսոյ կէսն էր. արեգական ճա-

ռագայթք շիտակ տեղային Փ. Ասիոյ լեռնադաշտաց և տափարակաց վրայ, որ ամառնային եղանակին այնքան տաք կ'ըլլան իրենց աշխարհագրական լայնութեան դրից համեմատ, որքան ձմեռը ցուրտ են՝ երկրակազմական դրից բարձրութեանն համար։ Յովհաննունոր պատրանաց տեղն կոկիւսոնէն վեց աստիճան դէպ 'ի վեր հիւսիս էր, և չորս աստիճան մ'այլ դէպ յարեեք. որով կ'իմացուի թէ հոն այլ սաստիկ ձմեռն պիտի ըլլայ, և անտանելի մեր փափուկ և տկար պանդխտին համար. հիմայ այլ ինչ դժնդակ պիտի ըլլայ այս 600 մղոնի չափ երկայն ճամբան, ասանկ տաք եղանակին, և անանկ անկոխ անվար քարուտ լեռնուտ տեղուանք, և միշտ դէպ յայն կողմն երթալով՝ ուսկից կ'իջնեն այն երկիրներու գետերն, Զահան, Ալիւս (Գզըլ-ըրմաք) և իուիս (Եշիլ-ըրմագ). ըսել է որ միշտ դէպ 'ի դար վեր պիտի ենէր աքսորեան։ Եթէ այսքան դժարութիւնք կասկածել կու տան անոր ողջ հանելուն այն դժար և հեռաւոր արգելանին, ինչ ըսելու է, Հայկակ, եթէ քշուելուն կերպն այլ յիշենք։ Հալածողքն դաղտուկ պատուիրած էին սուրբը տանողներուն, որ ամենէն անշէն և անկոխ տեղերէն անցրնեն, ամենսին չինայեն, հանգիստ չտան իրենց ձեռքը մատնուածին, և մէկ խօսքով՝ (զոր լաւ իմացուցին անոնց) նային որ 'ի Պիտիւստ չհասած՝ ճամբուն վրայ անոր բանը լրմընցընեն. և եթէ այսպէս ընելու ըլլան՝ մեծ վարձք կ'ընդունին և զինուորութեան մէջ առաջ կ'երթան։ Վասն զի այս դահիճ քան վարիչ ըսուածքն՝ արևէ արիւնէ անցած երկու ահարկու վայրագ զինուոր էին. ով գիտէ թէ ինչ բարբարոս ազգէ կամ կրօնքէ, (եթէ կրօնք այլ ունէին այնքան անզութ անկրօն հալածչաց պաշտօնեայ եղողքն)։ Բաւական ըլլայ ըսելն՝ որ իրենց պաշտօնը յանձնուածին համեմատ կատարեցին, մանաւանդ մէկն. անանկ որ այն երկայն ճամբուն հազիւ քառորդ կամ երբորդ մասն ըրած՝ քշովք և քշել ար-

ողք իրենց վախճանին հասան։ . . . Կոկիւսոնէ 'ի կոմանա, ուր որ միայն կըրցաւ համնիլ Սուրբն, շիտակ գծով այլ 150 մղոն մը կ'ըլլայ, իսկ իրեն քշուած ծուռ մուռ ճամբաներով՝ որ մեզ անծանօթ է, թերևս կրկին երկընցած ըլլայ. այս յայտնի է որ երեք ամսոյ չափ քշեց։ . . .

Երեք ամիս անդադար մարտիրոսութիւն մը, երկու աւազակ դահճաց ձեռք այն ճամբուն վրայ . . . Ո՞վ կրնար դիմանալ. — միայն Ոսկերերան։ Իր վերջին ըսած խօսքէն յայտնի է՝ որ առաջին ըսածն այլ էր այն՝ զոր ստէպ կ'ըսէր և ըսելէն դապրիլ չեմ կրնար կ'ըսէր. Փառք քեզ Աստուած, յաղագս ամենայնի։ — Քանի սրտապատառ էր լսելն զայն վերջին անգամ՝ կոկաց քարերուն և ջրերուն մէջ, որք երբեմն աշխարհիս ամայագոյն տեղն՝ հիմայ դըրախտ մը դարձեր էին մեր խօսնակին. — ո՞վ լսեց այն Ոսկերերնին վերջին մընաս բարովը՝ առ երեքամեայ նժդեհութեան տեղը. առ այն ծխոտ մխոտ խըցիկը տանն դէսակորի, որ Անտիօքայ և Բիւզանդիոնի պատրիարքական բեմից փոխանակ եղեր էր. — թերևս երանելի Պապուն ըսածին պէս՝ բաց յԱստուծոյ և ըսողին գիտակցութենէն՝ ոչ ոք լսեց։ Վասն զի կ'երևի թէ անկարծ և անակընկալ (գուցէ և գիշեր) ատեն՝ խաւարասէր բուիճակաց նման՝ վրայ հասան չարամագիլ վայրենի որսորդքն, և խլեցին մեր անզէն անմեղ եկեղեցւոյ խօսնակ վարուժանը. շթովլով բան մը հետն առնուլ, բաց անկէ զոր չէին կրնար արգելուլ. — իր աղամանդ սիրտը<sup>1</sup>։

Ո՞վ Տէր, ինչեր կրեց քու հրաշակերտ, այն մեծ սիրտն՝ իր երկրաւոր կենաց այս յետին երեք ամսուն մէջ. ինչեր ազդեցին անոր իր մարմնոյն կրած չարչարանքն, անճոռնի չարչարողաց կերպարանքն, խօսքերն, գործքերն. — անծանօթ և անմարդի տեղեաց դժա-

1 Թէպէտ Գէորգ պատմին համարի թէ հետը կային երկու քահանայք և սարկաւագ մը, որք քանի մը հարկաւոր բաներ այլ հետերնին առած էին։

ըռոթիւնն , լրութիւնն , սոսկումն , և ծայր ճոթ չերեխն . — զուրկ , հեռի և մենիկ մնալն ամեն սրտակցէ , ամեն բարեկամէ , ամեն միսիթարչէ . — ոչ խօսիլ և ոչ գրել կրնալն առ Ոլոմպիադա և առ այլ թղթակիցն . — այնքան հաւատարմաց ջանքէն՝ և խօստմունքէն միայն ամենէն մեծին՝ սրբազնն Պապուն վերջին խօսքին ստուգուիլն , թէ « Փորձուած զտուած խղճմուանքն՝ պի» տի ձգէ իր խարիսխը՝ 'ի նաւահան . « գիստն խաղաղութեան » . խօսք մը՝ որ միայն լրին արձագանգ մը կ'ըլլար իր անդադար և յաղագս ամենայնի՝ Աստուծոյ փառք տալուն : — Ո՞վ երջանիկ հայկական ճանապարհ , — թէպէտ և դժնդակ , այս , և մահառիթ մեր Սըրբոյն . — այլ դու քեզի երջանիկ՝ որ անոր յետին քայլից կնիքն առիր . ուր էր թէ յայտնուէիր , գտնէի տեսնէի այն ուխտազնալի հետքը , և թէ սողալով այլ հարկ ըլլար՝ անցնէի Ռսկերերան խօսնակիս յետին անցքէն : — Հարաւէն՝ 'ի հիւսիս բոլոր փոքր Հայոց երկայնքն էր այս եռամսնեայ ճամբան , գրեթէ ճիշդ երկու Հայոց բացաձիգ սահմանաց միջոցն , 'ի կոկիւսոնէ ցկոմանա : —

Մարդկութեան մեծագոյն ամօթոյ գործոց մէկը ծածկելու համար , կամ Աստուծոյ ընտրելոյն՝ միայն իրեն համար քաշածը մենէ գաղտուկ պահելու համար , այս յետին ժամանակին լուրերն չհասան յերկիր , միայն երկինք գիտեն . իսկ մեզի այսչափ յայտնեցաւ , որ շատ անխնայաբար և նեղութեամբ քշեցին զսուրբն այն ճամբէն , ամեննին չնայելով օդոց և գետնին անհարթութեան , և աքսորելոյն տկարութեան : Օր հասարակի տապախառն տպքի ատեն քաշկը կու տանէին Սուրբը՝ հետեակ և ցաւագին ոտքով . գըլխէն այլ ծածկոցը խլած՝ անմաղ գագաթը , որ Եղիսէին նման կունտ էր , կ'ըսէ հաւատարիմ՝ պատմիչն ; կու թողուին չարաչար տոշորելու . արդէն ինքն ենթակայ էր զլխի տաքութեան և ցաւոց . իսկ հոս հիմայ բնչ կ'ըլլար : Երեմն այլ սահմանաբաց երկնքէն անձ-

րեի ատեն՝ ճամբայ ընել կու տային . ջուրն կոնըկէն և գոգէն վար կ'իշնէր կ'ողողէր բոլոր մարմինը : . . . Եւ ասոնք կրողն ով էր . — Ռսկիբերան , այն մէկիկ խօսնակն եկեղեցւոյ . և ինչ ատեն կրէր . այն քրիստոնէութեան պայծառ և խաղաղ ատեն , կայսերութեան փառաց և ճոխութեան մէջ : . . . Այսքան կիրք և այսքան քաղցր համբերութիւն՝ գուցէ քարերն անգամ ճաթեցրնէին . քարասիրտ գահճաց մեկն այլ նման Քրիստոսի քովի աւազակաց մէկուն՝ յիշեց որ ինքն այլ իր քշածն այլ մարդեն , շարժեցաւ վերջապէս՝ 'ի գովթ , մինչդեռ ընկերն ձախակողմեան այլ աւելի խստանալով խոժուէր , ապառաժնար , սպառնար , հայհոյէր , եթէ մէկն իրեն աղաւէր որ քիչ մը գթով վարուի . հարկ կ'ըլլար որ միւսն շատ հեղ չետևի սըրտին աղգմանց , վախնալով հալածողաց շարութենէն և ընկերին մատնութենէն , բայց երբ նա քիչ մը հեռացած ըլլար , ձեռքէն եկած օգնութիւնը կ'ընէր Սըրբոյն :

Այսպէս չափեցին այն ծանր և երկայն երեք ամիաները . կտրեցին անցան բոլոր Զահանայ և Սիհունի և Ալիւսայ բարձրատափերը , հասան իոփիսայ հարաւային օժանդակին ( թօզանլը-սուկամ թօզադ-սու ) . անցան զայն այլ , և եկան 'ի կոմանա կամ կոմանիս քաղաքաւանը , որ գրեթէ միջասահման է Փոքր Հայոց և Պոլեմոնական Պոնտոսի , Դասեմինեան զաշտին մէջ ( Գաղ-օվասը ) . Եւդոկիա ( Թօքադ ) քաղաքէն 7-8 մղոն հեռու դէպ յարևելեան հիւսիս , և դեռ ծանօթ կիշմենէք անուամբն . որ հին ատեն անուանի ուխտատեղի էր Անահտայ կամ Լուսնի դից՝ ( Մա կամ Մահիկ անուանեալ ) <sup>1</sup> , և մեծ տօնավաճառ Հայոց , ուր քրմապետն գրեթէ թագաւորական իշխանութիւն ունէր , և հազարաւոր քուրմ ու քրմուհի : Քրիստոնէութիւնն ջնջեց զանոնք , և զտեղին նուիրեց Աստուծոյ ճշմարտի .

<sup>1</sup> Ուրիշ կոմանա մ'այլ կար 'ի Կապագադով կիա , նոյնպէս անուանի այս կոոց պաշտամանց համար :

Մեր կուսաւորչի ատեն կոմանա առան-  
ձին եպիսկոպոս մ'ունէր Բասիլիսկոս  
անուամբ՝ որ բնիկ Անտիռքացի էր. այն  
առեն Հռովմայեցւոց իշխանութեան  
տակ էր կոմանա. և մինչ Հայաստան  
Տրդատայ ձեռքին տակ կու վայլէր 'ի  
նորընկալ քրիստոնէութեան, հոս Մաք-  
սիմիանոսի հալածանօք կու նեղուէր .  
որ և պատճառ եղաւ եպիսկոպոսին նա-  
հատակութեանն 'ի Նիկոմիդիա (312),  
ուսկից բերին մարմինն և աս քաղաքա-  
ւանէն քանի մը մղոն հեռու թաղե-  
ցին, վրան այլ եկեղեցի մը կանգ-  
նեցին, որ եղաւ անուանի վկայա-  
րան մը<sup>1</sup>: Արդ հոս իր հայրենակցին  
հանգստեան քով՝ հանգչեցաւ Ոսկերե-  
րան սեպտեմբերի 13<sup>ի</sup> գիշերը. և երբ  
Յակոբ նահապետին պէս իր յոգնած  
և ցաւած գլուխը դրաւ այն սուրբ քա-  
րին, տեսաւ փափագելի տեսիլքն այլ.  
հանդերձեալ երանութեան լուսեղէն  
սանդուղն, ուսկից աւետաւոր գալով  
Ս. Բասիլիսկոս՝ ըսաւ, «Զօրացիր եղ-  
բայր իմ Յովիաննէս, վաղիւ 'ի միա-  
» սին լինիցիմք առաջի Քրիստոսի »:  
Նոյն Սուրբ վկայն, կ'աւանդեն, թէ  
երկցաւ իր նշխարաց պահապան քա-  
հանային այլ, և պատուիրեց իր հան-  
գրստարանին քով տեղ պատրաստել  
Յովիաննու :

Ծագեցաւ վաղուեան օրն, օրն մեծ  
և յաւուրս Ոսկերերանի: Մարմնոյն տր-  
կարութենէն և յայտնուած տեսիլքէն  
գիտնալով որ այլ ամեն բան իրեն հա-  
մար լմըննալու վրայ է, փափագեցաւ  
գոնէ կենաց վերջին օրն հանգստեամբ  
պատրաստուիլ՝ նոր կենաց առաջին և  
անվերջանալի օրուան. ինզրեց պահա-  
պաններէն՝ որ ուշանան հօն ինչուան  
ժամը հինգ: — Ո՛վ խեղճ խնդիրք, և  
անխեղճ փոխարէն: — Չէ, չըրին իրեն  
այս չնորհքս այլ, զոր գթութիւնն չի-  
զլանար յանցաւոր մահապարտաց այլ.  
նաև բռնաւորք շատ անգամ ասանկ  
բանի դէմ չեն կենար: Բայց Ոսկե-

<sup>1</sup> Ըստ ոմանց այս Ս. Բասիլիսկոս էր զինա-  
ւորն, ազգական Ս. Թէոդորոսի, Ամասիացի, և  
հոս 'ի կոմանա նահապետակեցաւ յամին 507:

բերան մը ասոր այլ արժանի չեղաւ :  
Յիշեց իր գերագոյն տէրն ու վարդա-  
պետը՝ երկու աւազակաց մէջ չոր փայ-  
տի վրայ գամուած, ծարուած, մեռած:  
Դարձեալ փառք տուաւ Աստուծոյ, և  
ելաւ. թող տուաւ որ քաշքըշն վա-  
տուժ և երեժտկող մարմինը, զոր իրենց  
մէ աւելի իրեն քաշէր հողն յետին հան-  
գրստեան: Կիսափետ կիսախեղդ հաւ-  
կի մը պէս առին հրեցին քշեցին, ին-  
չուան 30 ասպարէզ (3-4 մղոն) առա-  
պար երկրի վրայ. վերջապէս հասկը-  
ցան որ եթէ քիչ մ'այլ առաջ քշեն՝  
ձեռուընին մաշած կմախք մը պիտի մը-  
նայ, որոյ մէջ արդէն միայն սիրտն ու  
միտքն և քիչ մ'այլ շրթունքն՝ ողջ կ'ե-  
րևէին: Իրենց անարժան վարձուց վախ-  
ճանն հասած էր. ուրեմն գոհութեամբ  
փութացան նորէն յետ դառնալու<sup>1</sup>.  
Նորէն այն երկայն ասպարէզներէն քա-  
շելով քշելով բերին հոգեվար Խօսնա-  
կը. անկէ ետև անօգուտ բեռան մը պէս՝  
ձգեցին իր փափագած հանգստարա-  
նին քով:

Հասաւ առաւօտանց ժամադրեալ ա-  
տենն. այն վերջին ժամուն մէջ այլ այն-  
պէս մեծ և վսեմ երկցաւ Ոսկերերան,  
ինչպէս չէր երբէք երկած իր կ.Պօլսոյ  
բարձր բեմէն կայծակնարար բարբա-  
ռելուն ատեն: Ոչ մահացու և ոչ ան-  
մահ, այլ թէ կրնամ ըսել՝ աստուածա-  
կերպ իմն երկցաւ. երկրաւոր աստուած  
մը՝ որ երկնաւոր Աստուծոյ կ'աւանդէ  
իր հոգին: Մտնելով 'ի վկայարան սըր-  
բոյն Բասիլիսկոսի՝ պահ մը բոլոր ցը-  
րուեալ ոյժը ժողովեց, իրբև արեգակն  
իր երեկոյեան ճառագայթները. որոց  
վրայ բարձրագոյն ճառագայթ մ'այլ  
աւելի կու վայլէր — մերձեցեալ ան-  
մահութիւնն: — Ո՛չ որպէս մոտաւ յաշ-  
խարհ, այնպէս ելաւ յաշխարհէ. այլ  
գիտութեամբ, յօժարութեամբ և վեհ  
հանդարտութեամբ, միանգամայն և  
մեծ պատրաստութեամբ: Մահուան  
օրն է բանականը անբաններէ զատողն

<sup>1</sup> Ըստ ոմանց Ճամբան մոլորելով նորէն յետ  
գարձան :

և ոչ ծննդեան օրն : — Մէկ կողմէն կորած՝ մէկայլ կողմէն առած ուժով՝ կանգնեցաւ, և հոն վերջին սպասաւորութիւն մ'ընելու եկողներէն՝ ուզեցնոր և մաքուր լաթեր . իր եռամսեայ և եռամսեայ պանդխտութեան քճքճեալ և աղտեղեալ զգեստիկն հանեց, տուաւ փափագողաց . և ինքն զլիսէն ինչուան ոտից աման՝ մաքուր ճերմակ հագաւ . իբրև հարմութեան գացող կոյս մը՝ իր պարկեշտ և խաչազգեաց մարմինը ուղելով զարդարել . անոնց վրայ առաւ քահանայութեան սուրբ զգեստներ և նշաններն այլ . և ջահավառեալ աշտանակի մը պէս կանգնեցաւ առաջի Աստուծոյ . մատոյց սուրբ խորհուրդը, հաղորդեցաւ ընդ կենարարին, ընդ որում բոլորովին խառնուելու վրայ էր : Վերուց մէկ մ'այլ իր աներկրագարշ բազուկները, դարձուց 'ի վեր սրբահայեաց աչքերը, կեցաւ յաղօթս, 'ի զմայլումն, 'ի . . . Արդեզը Ահարոն 'ի գլուխ Հովր լերին, կամ Մովսէս 'ի գլուխ Արարիմայ՝ ասկէ վսեմ էին իրենց վերջին վայրկենին : — Ոսկիբերան ըստ իր երկրաւոր կենաց վերջին խօսքն առ Աստուծ . ապա կոթնեցաւ, հանգչեցաւ, ողջունեց չորս կողմն եղողները, և ամենուն լսելի ու զուարթ ձայնով՝ յետին անգամ և յետին բան ըստ, ֆառք քեզ Աստուծ, յաղագս ամենայնի, վրան աւելցընելով՝ Ամէն . որոյ յետին վանդը հազիւ լմընցուց, կամ գեռ կուհնչէ յաւիտենական երանութեանց մէջ : . . .

Աստուծային հիանալի տեսչութեան և երկայնամուլթեան քաջանշան մէկ հանդէսն այլ այսպէս հոս կատարեցաւ, այսպիսի մեծ և արդարեւ Մեծ անձի մը կենօք և վախճանաւ . զոր Տէրն իր ամենէն սիրելսաց պէս՝ թողեր էր յառերեւոյթ կամն վարչաց կամ բըռնաւորաց երկրի : Եւ երբ ասոնց կարծած փափագն 'ի գլուխ ելաւ, և նախանձն հասաւ մինչև 'ի վրէժ մահուն, երկինք՝ որ և յերկրի պատուեն ըղսուրբս իւրեանց, անծանօթ կերպով մը դրդում ձգեցին նոյն օր նոյն ժա-

մուն հեռաւոր և զանազան ժողովրդոց բարեսէր անձանց, որք գրեթէ առանց իմանալու իրարու շարժելուն պատճառն՝ եկան գտուեցան 'ի կոմանա, բազմութիւն բարեպաշտից, մանաւանդ միանձանց և կուսանաց՝ 'ի Հայոց, 'ի Պոնտոսէ, յԱսորոց և 'ի Կիւլիկիոյ, և միաբան պաշտամամիք, աղօթիւք, երդօք և արտասուզք, և ամենայն կարգգր եկեղեցւոյ, մեծաւ սգով և սիրով իջուցին հանգուցին չարչարակիր և սրբազնեալ մարմինն 'ի տապան, 'ի քովնըշխարաց Ա . Բասիլիսկոսի<sup>1</sup> . քաշերով վրան ծանր և մեզի սրտակտուր կափարիչը, որ ծածկեց յաշաց երկրի՝ իր 63 (կամ 50) տարի տարփալի տեսարանց մէկը : . . .

Ո՛հ, Բնչպէս կրնամ ես հեռանալ այս կափարչէս, Հայկակ, առանց հրաւէքը մը տալու՝ նախ այն նախանձուտաց՝ որ յայսքան վիշտ, մահ և յօտար գերեզման դատապարտեցին այս վեհագոյն մարդը : Եկէք ուրեմն ով ժողով ժանտից . . . (բայց չէ . իմ հեզ և անյիշաչար վարդապետիս գերեզմանին քով՝ Բնչպէս զձեզ անուանեմ) . Եկէք ըսեմ, ով մոլորեալք, Թէոփիլեանք և Եւգորիսեանք, տեսէք ըրածնիդ : Ատելութիւն և նախանձ ինչուան այս ատեն այսքան մեծ որս մ'ըրած էին արդեօք . — արդեզը տեղ մը այսքան մեծ արժանիք և արդիւնք՝ այնքան չնշին պատճառօք՝ այսպիսի ցաւալի և անարժան փոխարէն մ'ընդուներ էր : Ո՞վ այսպիսի Ոսկիբերան մը չարութեամբ լրեցուց . ով ասանկ աղամանդ սիրտ մը, ասանկ անդիւտ գանձ մը՝ ջանաց կորսընցընել : . . . Յիրաւի այնքան մեծ է ձեր յանցանքն, ամօթն և խայտառակութիւնն՝ առաջի ամենայն ազգաց և դարուց, որչափ փուռճ ելաւ ջանքերնիդ . ոսկին այն՝ մշտափայլ կայ մնայ միժնցը .

<sup>1</sup> « Որ և մատուցմամբ սրբոյ խորհրդոյն՝ Աւանդեցեր՝ 'ի Տէր զհոգիդ հմտական : Իսկ վկայարանըն Բասիլիսկեայ Ինքնին բանայրը զուապանն իւրական Եւ ընդունէր զգանձն աստուածական » : — Գանչ 'ի Խալչորոյ :

նելով ձեր ժանդը . աղամանսին այն՝ ուրուն հետ զարնուեցաք՝ մանրելով ցրուելով զձեզ՝ կու մնայ անմաշ : . . .

Բայց դուք կիբք չարածնունդք՝ որ բոյն գնելով՝ ի սիրտ մարդկան կու ծնանիք ամեն ժամանակ, դու զեղնած նախանձ և դու ժամեւոր զրպարտութիւն, դուք մինչև ցերը կու հալածէք զանոնք՝ որոց սրտին մէջ չկայ ձեր տեղն : — Եթէ քիչ անգամ այդպիսի մեծ անձ կու գայ յաշխարհ, կամ մէկ միայն Ռոկիբերան, սակայն քանի քանի բարեսիրտք և բարեմիտք՝ ձեր զինուց և ժամեաց զոհ կ'ըլլան . — քանի բերանք՝ զոնէ արծաթիք և անուշիկք՝ ձեր շշելովն՝ համրացան . — քանի մարդարտանման մաքուր սիրտք՝ ձեր ցաւէն փշրեցան . — քանի գրիչք՝ որք երկրիս վրայ կրնային անջինջ գիծ մը թողլու, ձեր բռնութենէն դադրեցան կոտրեցան . — որքան ճըշմարտութիւնք ձերստութենէն փախըստական եղան և լոեցին իսպառ . — որքան պայծառ նշոյքք՝ ձեր խաւարին մէջ թաղուած մնացին . — և որքան անմահ

մնալու մարդկանց՝ դուք շուտով գերեզման փորեցիք, կամ թէ և ողջ ողջ կորսատեան կափարիչը վրանին կոթնցուցիք : . . .

Իսկ դուք ով աղնիսք, որոց երկինք շնորհեցին չափով մը՝ Յովհաննու նմանութիւնը, — ճշմարտութիւն, հանճար, գորով և հալածանք . — դուք՝ կշռեցէք ձեր չափը ձեր կիբքը, և ձեզմէ առջիններուն կրածը . և եթէ իմ ազգակիցս և արենակիցս այլ էք, յիշեցէք ձեր նախնի ներսէները, Մովսէսները, Սահակները, Եղիշէն, Խոսրովիկն ու Ղազարը . և եթէ բաւական չեն ձեր այրած սրտին՝ ասոնց կիսաքանդ անայցելու գերեզմաններն, եկէք հոս 'ի տարագիր տապան մեծի խօսնակին Եկեղեցւոյ . հոս, կամ չդիմանալով՝ այս կափարչին վրայ դուք այլ փշրեցէք, և կամ համբերութեամք դիմանալով, « Փառք քեզ Աստուած յա » զագս ամենայնի » կանչեցէք, ու լուցէք : . . .

Հ. Դ. Մ. Ա. Վ. Ե. Ա. Տ.

Կը չարունակո՞ :

## ԶՈՐՆ ՅՈՎԱՍ.ՓԱ.ՏՈՒ

**Ամենախումբ տօնավաճառ հանդիսի  
Անծայրածիր հուսկ հրապարակ մահացուաց .  
Ուր մատուսցին յատեան վաճառքն անթերի ,  
Անմահութիւնն երկնից , եւ մահ սանդարաց :**

**Վաճառականքըն խուռնթաց կուտեսցին ,  
Հողմավարեալ զերդ աւազոյ դէզ անթիւ .  
Իրաւադատն ինքն անդ Աստուած յարդար գին  
Ամենեցուն տացէ զվաճառսըն ճըշդիւ :**

**Եւ աւանիկ ճեղքեալ ալուցն անդընդոց ,  
Մինչ այլք անդէն ձեռս ի ճակատ կորակոր  
Ատանձնեալ ըզմահ սուզին ի սեաւ վիհ խորոց .**

**Այլք ժառանգորդք անմահութեան երկնաւոր՝  
Աղաւնաթեւ յուղփեան արփիս սըլասցին ,  
Յերկուց աստի՛ մեզ ով ընկեր , որ բաժին :**

Հ. Ա. Ե.